

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» Արցախի Հանրապետության 2018 թվականի հունիսի 27-ի ՀՕ-36-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «վերջին հինգ տարում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը առնվազն երեք տարին մեկ անգամ: Դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
 ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>«Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրենքի «Դատախազ և քննիչ նշանակելու համար ներկայացվող ընդհանուր պահանջները» վերտառությամբ 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որպես տվյալ պաշտոններում նշանակվելու պահանջ, նախատեսում է վերջին հինգ տարում իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երկու տարվա փորձառություն ունենալը: Նշված կետում շեշտադրված «վերջին հինգ տարում» բառակապակցությունը գործնականում խոչընդոտում է դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակի համալրմանը, քանի որ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձի համար նախատեսված երկու տարվա իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի փորձառության որոշակի ժամանակահատված կարող է չընդգրկվել վերջին հինգ տարում, սակայն հավակնորդն կարող է ունենալ որոշակի տարիների իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի փորձառություն և միաժամանակ անցած լինի համաատասխան ուսումնառություն:</p> <p>«Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով սահմանված է դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակի կազմումը, որի 1-ին մասով սահմանված է, որ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրվում է որակավորման հանձնաժողովի կողմից՝ առնվազն երեք տարին մեկ անգամ գլխավոր դատախազի սահմանած կարգով անցկացվող բաց մրցույթի միջոցով: Փաստորեն օրենքով գլխավոր դատախազին առընթեր Որակավորման հանձնաժողովը արհեստականորեն զրկվում և սահմանափակվում է անցկացնելու փակ մրցույթ, և փակ մրցույթին չեն կարող մասնակցել 37-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված այն անձինք, որոնք վերջին հինգ տարվա ընթացքում ունեն դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ, կամ իրավաբանական գիտությունների դոկտոր են և ունեն իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երեք տարվա ստաժ, կամ իրավաբանական գիտությունների թեկնածու են և ունեն իրավաբանի մասնագիտությամբ առնվազն աշխատանքի հինգ տարվա ստաժ:</p> <p>«Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի</p>

	Նախագծի մշակման և ներկայացման առաջարկը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը ստացել է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից սույն թվականի հոկտեմբերի 2-ին:
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	Նախագծով առաջարկվում է «Դատախազության մասին» Արցախի Հանրապետության 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «վերջին հինգ տարում» բառերը, իսկ 37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ, սահմանելով որ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակը համալրվում է բաց և փակ մրցույթի միջոցով: Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը առնվազն երեք տարին մեկ անգամ: Դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:
3.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին
4.	Ակնկալվող արդյունքը
	Նախագծի ընդունմամբ կվերացվի դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձի իրավունքների սահմանափակումը, որը բխում է օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից և 37-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերի դրույթներից, համաձայն որոնց դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը, ով վերջին հինգ տարվա կտրվածքով իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երկու տարվա փորձառություն չունի, զրկվում է դատախազի և քննիչի պաշտոնում նշանակվելու հնարավորությունից, և անձը, ով վերջին հինգ տարվա ընթացքում ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ, կամ իրավաբանական գիտությունների դոկտոր է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երեք տարվա ստաժ, կամ իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ առնվազն աշխատանքի հինգ տարվա ստաժ, օգտվում է միայն բաց մրցույթին

	մասնակցելու իրավունքից:
--	-------------------------

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ